

Փէշիբա, Բրմնիբու Սարաթ, Փէաթրանէմց, Ալէքսանտրիա, Սլոպոզիա, Ուրզիշէն, Բընկէշէթ, Էւայլն, հաւանարար բոլորը միասին 500 հոգի:

Իմ հաշուովս 30,000-ը չ'անցնիր Ռուսմանիոյ սահմաններուն մէջ այսօր ապրող հայերուն թիւը՝ հիներն ու նորերը մէկտեղ, — 25,000-ը լուսաւորչական եւ 5000-ը կաթողիկ:

Իսկ թէ ո՛րքանը հայ է այս 30,000 հայերուն մէջէն, եւ թէ ո՛րքանը հայ պիտի մնայ վաղը, այսօրուան հայերուն մէջէն, ես կ'ամբընամ ճշդելու...

Թող մէկ ուրիշը խօսի այդ դամբանականը...

ԳԼՈՒԽ Գ.

ՀԱԼԱԾԱՆՔԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԳԷՄ

Գաղտնիք մը չեն կրօնական կոիւնները հայերուն եւ յոյներուն միջեւ, նոյնիսկ Ե. դարէն սկսեալ:

Եթէ այդ վէճերը արտաքննապէս կը բխէին վարդապետական հարցերու շուրջ անհասկացողութենէ մը. անոնք շարժառիթ ունէին զբխաւորապէս աթոռներու դերադասութեան կնճիւր:

Պարզ ըսելով՝ յոյները կը ճգնէին հայ եկեղեցին ենթարկել իրենց: Զկրնալով յաջողել իրենց ձեռնարկին մէջ, յոյները հալածանքի սկսան հայ եկեղեցիին դէմ, զայն իբր հերետիկոս ամբաստանելով, եւ իրենց հրատարակութիւններուն մէջ նախատինքներ տեղադրով հայ եկեղեցիի դիտուն:

Հայերը ԺԳ. դարէն սկսեալ դարձած ըլլալով աչքատու տարր մը ուսմէն երկիրներու մէջ, եւ յոյն Օրթոտոքս կղերը՝ որուն ազդեցութեան տակ էր Ռուսմանիան՝ չկրնալով հանդուրժել հայոց ծաւալման, հոն ալ սկսաւ իր կրօնական հալածանքները, ուսմէն տղէտ խաւերուն մէջ տարածելով վարկարեկիչ առասպելներ:

Յոյն կղերը երբեմն յաջողեցաւ իր նպատակին մէջ: Իր ծաւալած նախատինքները ոչ միայն հայ տարրին հանդէպ պաղուծիւն մը յառաջ կը բերէին երբեմն, այլ նոյնիսկ առիթ կը դառնային կազմակերպուած հալածանքներու:

* * *

Հայոց կրօնին դէմ ամենէն շեշտուած հալածանքը Շթէֆան Ռաուէչ Վոյվոտին (1551-1552) օրով եղաւ: Այս վոյվոտը, կարծես ջընջելու համար իր իսլամացած եղբոր Բլիասի թողած սեւ անունը, իր իշխանութեան առաջին տարին իսկ հրովարտակ մը հրատարակեց՝ հրամայելով իր բոլոր հպատակներուն ընդունիլ յունադաւանութիւնը: Հայերը մերժեցին, եւ ենթակայ եղան աննախընթաց հալածանքի մը, որուն պատմութիւնը մեզ հասցուցած է ականատես վկայ մը, Մինաս Թոխաթեցի, իր «Ողբ ի վերայ Օլախայ երկրի հայերուն» ոտանուոր երկին մէջ: Մինաս Թոխաթեցիի պատմածին համաձայն 1551 Օգոստոս 16-ին, Աստուածածնայ կիրակի օրը, Շթէֆան Վոտա, դեռտախ, չար եւ ամբարտաւան, իր պօէրներուն հետ կը մանչ Սուչովայի բերդը, ինչոյքի եւ խորհրդակցութեան կը նստի Օրթոտոքս եպիսկոպոսներուն եւ աւաղերէցներուն հետ, եւ յետոյ ձի հեծած կը դիմէ հայոց Ս. Աստուածածին եկեղեցին, խորանը կ'ելլէ, սկիհը կը նետէ գետին, միւսոնը կը թափէ, ձերբակալել կուտայ վարդապետն ու արեղաները, ու կը կղպէ եկեղեցին: Յաջորդ օրը զօրք կը դրկէ ու բանալ կուտայ եկեղեցին, ու կողոպտել կուտայ խաչերը, սկիհները, շուրջառները, բուրվառները, աւետարանն ու շարական, սաղմոս, մաշխոց եւ յայսմաւուրք, եւ վերջապէս ամէն թանկագին իր որ հոն կար, միւսոնն ատեն չարչարանքի ենթարկելով վարդապետն ու արեղաները: Յետոյ բերդէն թնդանօթ բերել տալով կը քանդէ եկեղեցին: Այս ձեւով կը քանդուին եւ կը կողոպտուին նաեւ Սուչովայի միւս հայ եկեղեցիները: Բոլոր հայերը, աշխարհական թէ կղեր, ծակէ ծակ կը փախին սարսափած: Զորեքշարթի առտու կը հաւաքէ բոլոր ուսմէնները, ու ամէնուն աչքին առջեւ այրել կուտայ հայ եկեղեցական գրքերը, ու ինքը բոցերուն դիմացը կեցած կը նախատէ հայ կրօնը: Զանգակները եւ պատկերները կը փոխադրուին Օրթոտոքս ժամը: Յետոյ զօրք կը դրկէ քաղաքին ամէն կողմը, որպէսզի իրենց պահուրտած տեղերէն առնեն իր առջեւ բերին բոլոր հայերը, քահանայ թէ աշխարհական, կին թէ նորհարս, ոմանց ձեռքը կապած, ու ոմանց մազէն քարչ տալով: Շթէֆան Վոտա